

ՊԱՐԵՏԻ ՈՐՈՇՈՒՄ N 275-Ա

4 սեպտեմբերի, 2020 թվական

ՄԻ ՇԱՐՔ ՏՆՏԵՍՎԱՐՈՂՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԻՐԱՌՎՈՂ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մարտի 16-ի №298-Ն որոշման 2-րդ, 6-րդ և 7-րդ կետերով և որոշման հավելվածի 20-րդ կետով, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի ղեկավարի 2020 թվականի օգոստոսի 19-ի N 2031-Ա, N 2034-Ա, N 2048-Ա, N 2066-Ա, N 2072-Ա, N 2074-Ա և N 2089-Ա, 2020 թվականի օգոստոսի 20-ի N 2097-Ա հրամանների հիման վրա 2020 թվականի սեպտեմբերի 1-3-ն իրականացված մշտադիտարկումների արդյունքում կազմված արձանագրությունները՝

1. 24 ժամով արգելել հետևյալ տնտեսվարողներին պատկանող մասնաճյուղերի (հասցեներում իրականացվող) գործունեության ծավալումը՝

- 1) «Էլլա Միրզոյան» Ա/Ձ՝ ք. Երևան, Քաջազնունի 30/3.
- 2) «Կերխեր» ՍՊԸ՝ ք. Երևան, Տիգրան Մեծի պողոտա 76, 41 շինություն.
- 3) «Մարինե Մկրտչյան» Ա/Ձ՝ ք. Երևան, Գայի պողոտա 19/60.
- 4) «Արմեն Սարգսյան» Ա/Ձ՝ ք. Երևան, Ե. Քոչար 2-17.
- 5) «Յունիվերսալ Փրոջեքտ» ՍՊԸ՝ ք. Երևան, Արին Բերդի 7"
- 6) «Հայկ Խալաթյան» Ա/Ձ՝ ք"Արմավիր, Հանրապետության 10Ա"
- 7) «Արանես» ՍՊԸ՝ ք. Մասիս, Հանրապետության 5/1.
- 8) «Հակոբ Գիվագիզյան» Ա/Ձ՝ ք. Եղեգնաձոր, Միկոյան 10/22.
- 9) «Էրիկ Հարությունյան» Ա/Ձ՝ ք. Եղեգնաձոր, Վայքի 1.
- 10) «Արմենուհի Սարգսյան» Ա/Ձ՝ ք. Եղեգնաձոր, Միկոյան 1 նրբ.1.
- 11) «Գրիշա Ստեփանյան» Ա/Ձ՝ ք. Եղեգնաձոր, Մոմիկի 2:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի ղեկավար Հակոբ Ավագյանին՝ ապահովել տնտեսվարողներին սույն որոշման մասին տեղեկացումը:
3. Տնտեսվարողի գործունեությունը արգելվում է տեղեկացման պահից:
4. Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետ Վահե Ղազարյանին՝ ապահովել սույն որոշման 1-ին կետի պահանջների կատարման նկատմամբ ամբողջական վերահսկողությունը:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

 Recoverable Signature

X 

VERIFIED OCSP 04/09/20 18:48:45 GMT+4

Signed by: AVINYAN TIGRAN 3802890590

Տ. ԱՎԻՆՅԱՆ